# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/10-01 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2016թ-ի հունիսի 01-ին կնքված ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/10-01-63 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2016թ-ի հոկտեմբերի 10-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

**Փոփոխության պատճառ :** Կողմերի մոտ անհրաժեշտություն է առաջացել Պայմանագրի N2 հավելված հանդիսացող Գնման ժամանակացույցում կատարել փոփոխություն:

**Փոփոխության նկարագրություն:** Ապրանքի մատակարարման ժամկետի երկարաձգում:

**Փոփոխության հիմնավորում:** Պայմանագրի 9.4 և 9.6 կետեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա. Խաչատրյանին:

Հեռախոս՝ 511 787:

Էլ. փոստ՝ ddgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
01.06.2016թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N <<ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/10-01-63>> ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան

«10» հոկտեմբերի 2016թ.

<<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ն՝ ի դեմս ղեկավար Կ. Փուղյանի, որը գործում է <<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ <<Գնորդ>>), մի կողմից, և «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Է. Հովսեփյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ <<Վաճառող>>), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 60-րդ կետով նախատեսված պայմանները և հիմք ընդունելով 01.06.2016թ. կնքված N <<ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/10-01-63>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.4 և 9.6 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի N2 հավելված հանդիսացող «ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ում «Նախատեսվում է գնել 2016 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև IV եռամսյակ 10.10.2016թ. ներառյալ» բառերը փոխարինել «Նախատեսվում է գնել 2016 թ. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև IV եռամսյակ 31.10.2016թ. ներառյալ» բառերով:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**ԳՆՈՐԴ**
***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար Կ. Փուղյան

(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
***«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Դրոյի 8, բն. 4
ՀՎՀՀ՝ 00889965
Հ/Հ՝ 24105020675400
«Յունիբանկ» ՓԲԸ
Մալաթիա մ/ճ

Տնօրեն Է. Հովսեփյան

(ստորագրություն)